2023 թ.

ՀՖԿՍՊԻ–ՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ/ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Որակի ապահովման բաժին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաձայն «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) Որակի ապահովման բաժինը (այսուհետ՝ ՈԱԲ) պարբերաբար իրականացնում է մասնագիտական/մանկավարժական պրակտիկայի գնահատում:

2022-2023 ուսումնական տարում որակի ապահովման ներքին աուդիտի շրջանակում «Լրագրություն», «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» և «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» բակալավրի կրթական ծրագրերի ուսումնառողների հետ անցկացված ֆոկուս խմբային քննարկումների արդյունքում արձանագրվել են պրակտիկայի արդյունավետությունից որոշակի դժգոհություններ՝ պայմանավորված տեղեկատվության տրամադրման, պրակտիկայի ղեկավարի ու մեթոդիստի աջակցության, լիարժեք պրակտիկ գործընթացի պակասի վերաբերյալ:

Որակի ապահովման ներքին աուդիտի զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրում մատնանշված են պրակտիկայի գործընթացի բարելավման գործողություններ և քայլեր, վերհանված խնդիրների հաղթահարման նպատակով վերանայվել է և հաստատվել նաև «Պրակտիկայի կազմակերպման կանոնակարգ»–ը:

Հարցման նպատակը

2023-2024 ուսումնական տարվա հարցումը նպատակ ունի պարզել պրակտիկայի գործընթացից ուսանողների գոհունակությունը, խնդիրների հաղթահարման դինամիկան, ինչպես նաև՝ գնահատել տվյալ ուսումնական տարվա պրակտիկայի արդյունավետությունը:

Հարցման մեթոդաբանությունը

Հարցումն իրականացվել է ՀՖԿՍՊԻ–ի «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզոլոգիա» և «Լրագրություն» բակալավրի կրթական ծրագրերի 4–րդ կուրսի ուսանողների շրջանում: Հարցում անցկացվել է առցանց տարբերակով, անանուն, ամեն կրթական ծրագրի համար առանձին, նախապես մշակված հարցաթերթի հիման վրա:

Հարկ է նշել, որ այս տարի հարցման մասնակիցների թիվը կտրուկ նվազել է: Թեև ՈԱ բաժնի աշխատակիցների կողմից կապ է պահպանվել թե՛ մեթոդիստների, թե՛ պրակտիկայի մասնակից ուսանողների, թե՛ ամբիոնների վարիչների հետ, թե՛ որակի ամբիոնային պատասխանատուների հետ, սակայն ուսանողների մասնակցությունը չի հաջողվել մոտեցնել նախորդ տարիների մասնակցության թվին: Եթե 2022-2023 ուստարում պրակտիկային մասնակցած 200 ուսանողներից հարցմանը մասնակցել է

121–ը՝ 61%, ապա այս տարի հարցման մասնակիցների թիվը կազմել է 76՝ ուսանողության 35%–ը (տե՛ս Աղյուսակ 1): Այսպիսով՝ «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» և «Լրագրություն» կրթական ծրագրերի համար հնարավոր է եղել ապահովել պահանջվող նվազագույն թվաքանակը, սակայն «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» (այսուհետ՝ «ՖԴՍՄ») կրթական ծրագրի համար ոչ՝ հրաժարումների մեծ քանակի պատճառով (ՖԴՍՄ կրթական ծրագրի 40% ուսանող հրաժարվել է մասնակցել հարցմանը): Հետևաբար «ՖԴՍՄ» կրթական ծրագրի հարցման քանակական արդյունքները ներկայացուցչական չեն կարող համարվել:

Աղյուսակ 1

Կրթական ծրագրի անվանումը	Ընդհանոր ուսանողների թիվը	Հարցմանը մասնակցած ուսանողների թիվը	Տոկոսը
«ՖԴՍՄ»	172	51	30%
«Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա»	36	20	56%
«Լրագրություն»	10	5	50%
Ընդհանուր	**218**	**76**	**35%**

Հարց 1. Որտե՞ղ եք անցկացրել պրակտիկան:

Գծապատկեր 1



Գծապատկեր 2



Հարկ է նշել, որ տվյալ կրթական ծրագրի ուսանողները պրակտիկան անցել են երկու և ավելի վայրերում, ուստի վերը նշված թվերի գումարը գերազանցում է 100%-ը:

Գծապատկեր 3



Հարց 2. «Պրակտիկայի սկզբում ձեզ տրամադրվե՞լ է պրակտիկայի ծրագիրը և տեղեկատվություն պրակտիկայի անցկացման գործընթացի վերաբերյալ»:

Գծապատկեր 4



Պրակտիկայի սկզբում տեղեկատվություն չի տրամադրվել հարցմանը մասնակցած «Լրագրություն» կրթական ծրագրի ուսանողների 20 %–ին, «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ծրագրերի ուսանողների՝ 10%–ին:

Հարց 2.1 Եթե այո, ապա ո՞ւմ կողմից է տրամադրվել է տեղեկատվությունը:

Գծապատկեր 5



ՀՖԿՍՊԻ–ի «ՖԴՍՄ» ՄԿԾ–ով ուսումնառողները պրակտիկայի վերաբերյալ հիմնականում տեղեկատվություն ստացել են Պրակտիկայի բաժնի (68%), իսկ «Լրագրություն» (100%) և “Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» (50%) ՄԿԾ–ների ուսումնառողները հիմնականում՝ ամբիոնի կողմից:

Հարց 3. Պրակտիկան կազմակերպվա՞ծ էր պրակտիկայի ծրագրին համապատասխան:

Գծապատկեր 6



Հարցված ուսանողներն հիմնականում փաստում են, որ պրակտիկան կազմակերպվել է ծրագրին համապատասխան:

Հարց 4. Պրակտիկայի նպատակը հասկանալի՞ էր Ձեզ համար:

Պրակտիկայի նպատակը հասկանալի է եղել հարցվածների միջինում 82%-ի համար՝ մասնավորապես «ՖԴՍՄ» ՄԿԾ–ի ուսանողների՝ 100%-ի, «Լրագրություն» ԿԾ–ի ուսանողների՝ 80%-ի, իսկ «Կինեզիոլոգիայի» ուսանողների՝ 65%-ի համար (տե՛ս Գծապատկեր 7): Պրակտիկայի նպատակը հասկանալի չի եղել լրագրողների 20%-ի համար:

Գծապատկեր 7



Հարց 5. Արդյո՞ք պրակտիկան նպաստել է նոր գիտելիքների ձեռքբերմանը:

Նոր գիտելիքների ձեռքբերման տեսանկյունից բարձր գոհունակություն է դիտարկվել բոլոր կրթական ծրագրերի հարցվածների շրջանում: Սակայն

«Լրագրություն» ԿԾ–ի ուսանողների 20%–ը նշում է, որ պրակտիկան վերոնշյալ գործառույթը չի կատարել (տե՛ս Գծապատկեր 8):

Գծապատկեր 8



Հարց 6. Արդյո՞ք պրակտիկան նպաստել է գործնական կարողությունների ձեռքբերմանը:

Գործնական կարողությունների ձեռքբերման տեսանկյունից պատկերը գրեթե նույնն է, ինչ գիտելիքների դեպքում: Թեև հիմնականում առկա է բարձր գոհունակություն, սակայն «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ծրագրի ուսումնառողների 25%-ը նշում է, որ պրակտիկան մասամբ է նպաստել գործնական կարողությունների ձեռքբերմանը (տե՛ս Գծապատկեր 9), իսկ լրագրողների 20%–ը նշել է, որ պրակտիկան չի նպաստել գործնական կարողություններին:

Գծապատկեր 9



Հարց 7. Պրակտիկայի ընթացքում ձեռք բերած կարողությունները և փորձը կարո՞ղ եք կիրառել Ձեր աշխատանքային գործունեության ընթացքում:

Հարցված կինեզիոլոգների 65%-ը և լրագրողների 80%-ը նշում են, որ պրակտիկայի ընթացքում ձեռք բերած կարողությունները և փորձը կարող են կիրառել իրենց աշխատանքում (տե՛ս Գծապատկեր 10):

Գծապատկեր 10



Հարց 8. Ուսումնառության ընթացքում Ձեր յուրացրած տեսական գիտելիքները և գործնական կարողությունները բավարա՞ր են պրակտիկ գործունեություն իրականացնելու համար:

Այն դեպքում, երբ «Լրագրություն» ԿԾ–ի հարցված ուսանողների 80%–ը նշում է, որ յուրացրած տեսական գիտելիքները և գործնական կարողությունները բավարար են եղել պրակտիկ գործունեություն իրականացնելու համար, «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» ԿԾ–ի 20%-ի համար դրանք մասամբ են բավարար եղել, իսկ 30%-ի համար՝ ընդհանրապես չեն բավարարել (տե՛ս Գծապատկեր 11):

Գծապատկեր 11



Հարց 8. Գնահատեք ընդունող կազմակերպության աջակցությունը պրակտիկայի ընթացքում:

Պրակտիկան ընդունող կազմակերպության աջակցությունից ամենաբարձր գոհունակությունը՝ 88%, գրանցվել է «ՖԴՍՄ» կրթական ծրագրի ուսանողների շրջանում (տե՛ս Գծապատկեր 12):

Համեմատաբար ցածր գոհունակություն է գրանցվել ապագա լրագրողների և կինեզիոլոգների շրջանում: Ընդունող կազմակերպության աջակցությունը անբավարար է գնահատել հարցված կինեզիոլոգների 5%-ը:

Գծապատկեր 12



Հարց 8.1. Մանրամասնեք ինչպիսի՞ աջակցություն է տրամադրել ընդունող կազմակերպությունը պրակտիկայի ընթացքում:

«ՖԴՍՄ» կրթական ծրագիր

- ✓ Նյութեր, տեղեկություններ են տրամադրվել, հատկացվել է անհրաժեշտ գույք:
- ✓ Օգնել են երեխաների հետ աշխատել:
- ✓ Ընդունելությունը կազմակերպվել է շատ ջերմ, և ցանկացած հարցով դիմելու դեպքում ստացել եմ համապատասխան օգնություն:
- ✓ Ամենակարևորը՝ հարգալից վերաբերմունք:

«Լրագրություն» կրթական ծրագիր

- ✓ Յուրաքանչյուր հարցով մեր մեթոդիստը մեր կողքին է եղել, եթե ցանկացել ենք այցելել հեռուստատեսության տարբեր բաժիններ մեծ սիրով ուղեկցել է, բացատրել է հեռուստատեսության աշխատակիցների դերը, կարևորությունը:
- ✓ Հասկանալի, գրագետ բացատրել է այն ամենն, ինչ ինձ հետաքրքրում էր:

“Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ծրագիր

- ✓ Թույլ էին տալիս շփվել, աշխատել բուժառուի հետ, մանրամասն պատասխանում էին հարցերին:
- ✓ Մեծ սիրով և համբերատարությամբ պատասխանել են յուրաքանչյուր հարցին:

Հարց 9. Գնահատեք պրակտիկայի բազայում տեղի մասնագետի աշխատանքը 1-ից 5 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը՝ անբավարար, 5-ը՝ գերազանց:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս հարցում տեղի մասնագետների աշխատանքից բավարարվածության ամենաբարձր մակարդակը գրանցվել է «ՖԴՍՄ» ՄԿԾ–ում (տե՛ս Գծապատկեր 13): Զուգահեռաբար ցածր բավարարվածություն է գրանցվել «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ծրագրում:

Գծապատկեր 13



Հարց 9.1. Ի՞նչ դիտարկումներ և առաջարկություններ ունեք պրակտիկայի բազայում տեղի մասնագետի աշխատանքի բարելավման վերաբերյալ:

«ՖԴՍՄ» կրթական ծրագիր

- ✓ Պայմանների բարելավում:
- ✓ Ապահովվել մարզագույքով, վերանորոգել դահլիճները, ջեռուցել:
- ✓ Ըստ ինձ պայմանները պետք է բարելավել դպրոցում, որ դասը անցնի ավելի լավ:

“Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ծրագիր

- ✓ Պրակտիկա գնալ ավելի շուտ, քան չորրորդ կուրսում:
- ✓ Ուիգմորում տարածքը նեղ է:

«Լրագրություն» կրթական ծրագիր

- ✓ Ավելի երկար ժամանակահատվածով անցկացնել պրակտիկան:
- ✓ Պրակտիկայի նպատակն այն է, որ ուսանողը կարողանա իրեն պատկերացնել հաղորդավարի կամ լրագրողի դերում: Նրան աշխատանքներ հանձնարարվեն, դրանից հետո դրանք կիրառվեն տաղավարում:
- ✓ Պրակտիկան ակտիվ ու արդյունավետ պետք է լինի:

Հարց 9.2. Գնահատեք պրակտիկան ղեկավարող մեթոդիստի (դասախոսի) աշխատանքը 1-ից 5 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը՝ անբավարար, 5-ը՝ գերազանց:

Պրակտիկան ղեկավարող մեթոդիստի (դասախոսի) աշխատանքը «*գերազանց*» են գնահատել հարցված ապագա մանկավարժների 98%-ը, կինեզիոլոգների 63%-ը, իսկ լրագրողների 60%-ը (տե՛ս Գծապատկեր 14): Պրակտիկան ղեկավարող մեթոդիստի աշխատանքը անբավարար են գնահատել հարցված կինեզիոլոգների 5%-ը:

Գծապատկեր 14



Հարց 10. Պրակտիկայի տևողությունը բավարա՞ր էր դրված նպատակներին հասնելու համար:

Այս հարցին դրական («այո») պատասխան տվողները կազմում են հարցմանը մասնակից «ՖԴՍՄ» ՄԿԾ–ի ուսանողների 88%-ը, «Լրագրություն» ՄԿԾ–ի՝ 40%-ը և «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» ՄԿԾ–ի՝ 20%-ը (տե՛ս Գծապատկեր 15): «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ծրագրի պրակտիկանտների 50%-ը կարծում է, որ հատկացված ժամանակահատվածը բավարար չէ պրակտիկայի նպատակներին հասնելու համար:

Գծապատկեր 15



Հարց 10.1. Ձեր կարծիքով որքա՞ն պետք է լինի պրակտիկայի տևողությունը այն ավելի արդյունավետ դարձնելու համար:

Թեև գծապատկեր 17-ում “Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» ԿԾ–ի ուսումնառողների 50%–ը նշում է, որ պրակտիկայի տևողությունը բավարար չէ, իսկ 55%-ը կարծում է, որ սահմանված 8 շաբաթը բավարար է արդյունավետ պրակտիկա իրականացնելու համար (Գծապատկեր 16):

Հարցվողների փոքր մասը՝ «Լրագրություն» ՄԿԾ–ի 20%–ը, «ՖԴՍՄ» ՄԿԾ–ի 13%–ը, “Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ծրագրի 10%–ը կարծում է, որ պրակտիկայի արդյունավետության բարձրացման անհրաժեշտ է այն երկարաձգել և դարձնել 9 շաբաթ և ավելի:

Գծապատկեր 16



Հարց 10.2. Ո՞ր կուրսում կցանկանայիք անցնել պրակտիկա:

Ըստ «Լրագրություն» ԿԾ–ի ուսումնառողների 60%-ի, «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» ԿԾ–ի 35%-ի պրակտիկան անհրաժեշտ է անցնել 2-րդ կուրսում (տե՛ս Գծապատկեր 17): 3-րդ կուրսում պրակտիկա անցնել նախընտրում են «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» ԿԾ ուսանողների 65%, «ՖԴՍՄ» ԿԾ–ի 28%–ը և «Լրագրություն» ԿԾ–ի 20%-ը:

Հարկ է ընդգծել, որ «ՖԴՍՄ» կրթական ծրագրի հարցվողների գերակշիռ մասը՝ 61%-ը, և «Լրագրություն» ԿԾ–ի 20%-ը նախընտրում են պրակտիկան անցնել 4-րդ կուրսում:

Գծապատկեր 17



Հարց 10.3. Գնահատեք պրակտիկայի տետրի օգտակարությունը 1-ից 5 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը՝ անբավարար, 5-ը՝ գերազանց:

Պրակտիկայի տետրի օգտակարությունը գերազանց է գնահատել «ՖԴՍՄ» կրթական ծրագրի ուսանողների մեծամասնությունը՝ 63%-ը (տե՛ս Գծապատկեր 18):

Մեծամասնության կարծիքով՝ պրակտիկայի տետրը հետաքրքիր է, ուսուցողական և նպատակային:

Գծապատկեր 18



Աղյուսակ 2

ՖԴՍՄ	
Նշեք պրակտիկայի տետրի 3 դրական կողմ:	**Նշեք պրակտիկայի տետրի 3 բացասական կողմ:**
Շատ լավ էր հավաքած, համարակալված	Լրացնելու նյութերը շատ ծավալուն էր և անիմաստ
Ուսուցողական, հետաքրքիր, արդյունավետ, նպատակային, հակիրճ, բովանդակալից	Նույն աշխատանքը շատ ենք գրում

Հնարավորություն եմ ստացել տետրի մեջ կիսվել իմ տպավորությամբ:	Այն լրացնելը ժամանակատար է
Հնարավորություն եմ ստացել ծանոթանալ և տիրապետել մանկավարժական փաստաթղթերին:	Կարելի էր օրագրերը ամփոփել շաբաթով՝ նշելով ամսաթիվ
Կարողանում ես քո տեսածը և սովորածը վերարտադրել, և գիտելիքը ավելի է ամրապնդվում:	Աշխատում են նոր տեխնոլոգիայով և չեն լրացնում մատյաններ
Օգնում է ծանոթանալ ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի աշխատանքին	Հատկացնել առանձին ժամանակ տետրերի լրացման համար
Տեղեկանում ենք տարեկան պլանից, թեմատիկ պլանից և կոնսպեկտի գրման ձևերից	Կան ավելորդ բաժիններ, որոնք պրակտիկայի արդյունավետությունը չեն բարձրացնում
Օգնում է աշխատել ավելի կազմակերպված, ամրապնդում է անցած կուրսերում ձեռք բերված գիտելիքները, նպաստում է ինքնուրույնության զարգացմանը	Սպորտայնացված դասեր չեն անցկացվում, իսկ սեկցիոն դասերը ավելորդ ծանրաբեռնում են տետրը:
Սովորեցինք գրել թեմատիկ պլան, տարեկան պլան, կոնսպեկտ	Լրացուցիչ ժամանակի տրամադրում
Պրակտիկայի տետրում կան շատ օգտակար նյութեր, որոնք հեշտացնում են մեր գործը, այսինքն կան նշումներ, ուղեցույց:	

10.4. Ինչպե՞ս կգնահատեք անամնեզի քարտի օգտակարությունն ու արդյունավետությունը:

Հարցմանը մասնակցած «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» ԿԾ–ով ուսումնառողների մեծամասնությունը անամնեզի քարտի օգտակարությունը գնահատել է «գերազանց» (32%) կամ «լավ» (31%) (տե՛ս Գծապատկեր 19):

Գծապատկեր 19



Պարզելու համար, թե ինչ դրական և բացասական կողմեր ունի անամնեզի քարտը՝ տրվել է նաև լրացուցիչ հարց: Ըստ ուսանողների որոշ մասի՝ այն օգտակար էր տեղեկատվության տեսանկյունից, սակայն որոշների կարծիքով էլ լրացված էր ոչ գրագետ և չէր համապատասխանում բժշկի կողմից տրված անամնեզի տերմինաբանությանը (տե՛ս Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

«Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա»	
Նշեք անամնեզի քարտի դրական կողմերը	**Նշեք անամնեզի քարտի բացասական կողմերը**
Օգտակար էր ավելի մանրամասն ախտորոշման մասին իմանալու համար	Հասկանալի չէր
Քարտում մանրամասն ներկայացված էին բուժառուի տվյալները	Գրագետ ձևով չէր լրացված ոչինչ, ինֆորմացիան թերի էր
Ավելի լավ ենք պատկերացում կազմում հիվանդության մասին	Բժշկի կողմից տրված անամնեզը չի համապատասխանում մեր մասնագիտական տերմինաբանությանը
Հասանելի էր մեզ անհրաժեշտ տեղեկությունները	Երբեմն հասկանալի չէր գրված բովանդակությունը

Հարց 11. Նշեք պրակտիկայի առավելությունները

Չնայած հարցման մասնակցության ցածր տոկոսի, 2022-2023 ուսումնական տարվա ուսանողների բավարարվածությունը պրակտիկայից աճել է (տե՛ս Աղյուսակ 4): Ավելի մանրամասն ուսումնասիրելու համար, թե ինչ բարեփոխումների շնորհիվ է դա եղել, ուսանողները պատասխանել են նաև այն հարցին, թե որոնք են եղել պրակտիկայի առավելությունները:

Աղյուսակ 4

Պրակտիկայի առավելությունները		
«Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» ԿԾ	**«Լրագրություն» ԿԾ**	**«ՖԴՍՄ» ԿԾ**
• Առավելությունն այն է, որ հասկանում ենք մեր մասնագիտությունը:	• Հասանելիություն, անմիջականություն, մասնագետների հետ շփվելու հնարավորություն,	• Նոր շրջապատ, մասնագետների հետ շփում, ինչպես նաև մանկավարժական փորձ:

• Միակ լավ բանն այն էր, որ մենք կարող էինք բուժառուի հետ ունենալ կոնտակտ, շփում: • Իսկական մասնագիտական հմտություններին տիրապետումը: • Առավելությունները շատ են, երբ դու տեսնում ու աշխատում ես միանգամից, շփվում ես բուժառուի հետ, սովորում ես թիմային աշխատել, պատկերացնում ես, թե ինչ խնդիրների կարող ես բախվել, երբ սկսես աշխատել: • Հենց անմիջապես տեսնում ես այն գործընթացը, որը պիտի կատարես:	նոր հմտություններ ձեռք բերելու հնարավորություն: • Մասնակցություն հաղորդումների նկարահանումներին և ուղիղ եթերներին: • Հայաստանում ամենադիտարժան ու ամենահետաքրքիր բովանդակություն տվող հեռուստաալիքում եմ անցել պրակտիկաս: • Լավ մարդիկ, հաճելի մթնոլորտ, ընկերական միջավայր, որակյալ մասնագետներ: • Տարբեր ժանրերով լրագրողական նյութ գրել:	• Հնարավորություն ստացա դպրոց մտնել ուսուցչի կարգավիճակով և սիրեցի դպրոցը: • Գիտելիքների հարստացում: • Կազմակերպչական կողմը: • Մասնագիտական ունակություններ ու հմտություններ ձեռքբերում: • Մեթոդիստը: • Շատ հետաքրքիր էր երեխաների հետ աշխատել: • Աշխատել ենք լավ մասնագետների հետ: • Մասնագիտական հմտությունների բարելավում: • Պրակտիկան ինձ սովորեցրեց և ցույց տվեց, թե ինչպես պետք է աշխատել երեխաների հետ, օգնեց ինձ կիրառել Ինստիտուտում նախորդ տարիներին ձեռք բերած գիտելիքները: • Անմիջական շփում դասապրոցեսի, աշակերտների հետ, նոր գիտելիքների ձեռքբերում:

Որպես պրակտիկայի թերություն բոլոր կրթական ծրագրերի ուսանողները նշել են ժամանակի սղությունն ու պրակտիկան ուշ սկսելը (տե՛ս Աղյուսակ 5): «ՖԴՍՄ» կրթական ծրագրի ուսանողների դեպքում պրակտիկայի թերությունները կապված են նաև ոչ թե ծրագրի, այլ դահլիճների անբարվոք վիճակի ու մարզագույքի բացակայության հետ:

Աղյուսակ 5

Պրակտիկայի թերությունները		
«Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» ԿԾ	**«Լրագրություն» ԿԾ**	**«ՖԴՍՄ» ԿԾ**
• Շատ ուշ են սկսվել: • Չկա հստակություն:	• Կարճ էր: • Շուտ վերջացավ:	• Անհրաժեշտ գույքի պակաս:

• Սկզբի համար հոգեբանական ֆակտորը, պիտի ավելի նախապատրաստված լինեինք:	• Միապաղաղ:	• Թերություններից կնշեմ այն, որ կարելի է վերանորոգել դահլիճը և ավելացնել մարզագույքը: • Երեխաների հետ քիչ եմ շփվել դասից դուրս թեմայով, ինչը իմ համար շատ կարևոր նշանակություն ունի: • Դասը անցկացնելու ժամանակ իմ մոտ լարվածություն կար, կար նաև խոսքային հրահանգների սխալմունք. դա ևս լարվածությունից էր: • Պրակտիկայի ժամանակահատվածը քիչ էր: • Ժամանակահատվածը շատ քիչ էր դասերի հետ կապված շատ է խանգարում: • Պրակտիկայի ճիշտ չէր կազմակերպվում: • Ժամանակահատվածը քիչ է:

Հարց 12. Կլինիկական պրակտիկայի ընթացքում ի՞նչ կարողություններ և հմտություններ եք ձեռք բերել, որոնք ուսումնառության ընթացքում պակասում էին (նշել հնարավոր տարբերակները)

Աղյուսակ 6

«Կինեզիոլոգիա»	%
Վերականգնողական կենտրոնում կիրառվող ռեաբիլիտացիայի մեթոդների իմացություն և կիրառվող բուժական վարժությունների տեսակների իմացություն	50%
Ճիշտ գնահատել հիվանդի ֆիզիկական ակտիվության դերը առողջության հետ կապված խնդիրների և վնասվածքների գործում	45%
Մասնագիտական գործողությունը պլանավորելու, կազմակերպելու, իրականացնելու և ստացված արդյունքները վերլուծելու կարողություն	40%
Բոլոր նշված տարբերակները	40%
Թիմում աշխատելու, աշխատանքի կազմակերպման և արդյունքների համար պատասխանատվություն ստանձնելու կարողություն	35%
Հիվանդությունների էթիոլոգիայի, պաթոգենեզի, կլինիկական արտահայտությունների և բուժման ձևերի պատկերացումներ	30%
Ռեաբիլիտացիայի ընթացքում ինքնուրույն կարողանալ կազմել յուրաքանչյուր հիվանդի ֆիզիկական ռեաբիլիտացիայի ծրագիրը և իրականացնել այն	30%

Աղյուսակ 7

«ՖԴՍՄ»	%
Նշված բոլոր տարբերակները	53%
Աշակերտների հետ հաղորդակցվելու, ստեղծված խնդրահարույց իրավիճակները լուծելու, աշակերտների ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության մակարդակը գնահատելու, ստացված արդյունքները վերլուծելու կարողություն	22%
Դպրոցում ուսուցչի մասնագիտական գործունեությունը պլանավորելու, անհրաժեշտ փաստաթղթերը կազմելու, մասնագիտական պարտականությունները և իրավունքները ընկալելու, աշխատավայրում կոլեկտիվի հետ համագործակցելու կարողություն	20%
Ընտրած մասնագիտության սոցիալական նշանակությունները, էությունը ընկալելու, ծառացած հիմնախնդիրները գիտակցելու և լուծման ելքերը որոշելու կարողություն	4%
Ֆիզիկական կուլտուրայի դասի, արտադասարանական պարապմունքների, մարզական և ֆիզկուլտուրային–առողջարարական միջոցառումների վերլուծության և առաջացած խնդիրների լուծման ուղիներ գտնելու կարողություն	2%
Ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու կարողություն՝ կիրառելով ավանդական և ժամանակակից տեխնոլոգիաները և մեթոդները:	0%

Աղյուսակ 8

«Լրագրություն»	%
Հարցազրույց անցկացնելու հմտություններ	40%
Նկարահանման և մոնտաժի հմտություններ	40%
Լրագրողական նյութ գրել՝ տարբեր ժանրերով	20%
Հարցազրույց անցկացնելու հմտություններ, նկարահանման և մոնտաժի հմտություններ, ֆոտոլրագրողի հմտություններ	20%
Աշխատել կադրում, խմբագրական հմտություններ	20%

Հարց 13. Ի՞նչ ակնկալիքներ ունեիք Ձեր պրակտիկայից

«Լրագրություն» ՄԿԾ

- ✓ Նոր հմտություններ ձեռք բերել, որոնք կօգնեն ինձ բարելավել մասնագիտական գիտելիքներս:
- ✓ Մասնագիտական աճ, եթերում գտնվելուց յուրաքանչյուր մանրուքի ուսումնասիրում:
- ✓ Գործնական գիտելիքների ավելացում:

«Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» ՄԿԾ

- ✓ Ակնկալիքներս ավելի շատ էին: 2 շաբաթը շատ քիչ է տվյալ հաստատության մասնագետներին, բուժառուներին ադապտացվելու համար: Սպասելիքներ ունեի, որ մեզ կտան ավելի շատ գիտելիքներ բուժառուների ռեաբիլիտացիոն ծրագրերի, ընտրված վարժությունների, մեթոդիկաների մասին, և մանրամասն նկարագիր, որը հետագայում մեզ համար կհանդիսանար ուղեցույց (պրոտոկոլ) առաջնորդվելու համար: Ցավալի է, բայց մենք դեռևս չունենք այնքան գիտելիքներով հարուստ մասնագետ, որը մեզ կտա բազում գիտելիքներ յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առանց վարանելու:
- ✓ Ավելի վաղ պրակտիկայի հաճախում:
- ✓ Անհամբեր սպասում էի, ու լրիվ արդարացրեց: Ոչ մի օր բաց չեմ թողել, ու ստացել եմ շատ գիտելիքներ, աշխատել եմ ինքնուրույն մի քանի օր այցից հետո երկու պրակտիկայի վայրում էլ:
- ✓ Տեսնել ինձ գործնական պրոցեսի մեջ

«ՖԴՍՄ» ՄԿԾ

- ✓ Նոր գիտելիքների բարելավում:
- ✓ Ստանալ գիտելիքներ և ծանոթանալ ֆկ ուսուցչի աշխատանքին:
- ✓ Շատ բաներ սովորելու մասնագիտության հետ կապված:
- ✓ Հետագայում աշխատելու համար ունենալ փորձ, երեխաների հետ շփվելու, դաս անցկացնելու և այլն:
- ✓ Մասնագիտանալ այդ գործում:
- ✓ Հետագայում աշխատել դպրոցում:
- ✓ Ունեցած գիտելիքների համատեղ կիրառումը պրակտիկայում:
- ✓ Համապատասխան որակավորում ստանալ:
- ✓ Ստացա այն, ինչը իմ գիտելիքները ավելի ամրապնդեց:

Հարց 14. Ձեր ակնկալիքները արդարացվեցի՞ն

Պրակտիկան արդարացրել է «ՖԴՍՄ» ՄԿԾ–ի հարցվողների 84%-ի, «Լրագրություն» կրթական ծրագրի 80%-ի և «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» ՄԿԾ–ի 68%–ի ակնկալիքները (տե՛ս Գծապատկեր 20):

«ՖԴՍՄ» կրթական ծրագրի ուսումնառողների 14%-ի և «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» ՄԿԾ–ի սովորողների 21%-ի ակնկալիքները մասամբ են արդարացվել, «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» ՄԿԾ–ի ուսումնառողների 11%-ի ակնկալիքները չեն արդարացվել:

Գծապատկեր 20



Հարց 15. Խնդրում ենք արտահայտեք պրակտիկայի արդյունավետության բարելավման առաջարկություններ

Աղյուսակ 9

«Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա»	«Լրագրություն»	«ՖԴՍՄ»
• Պրակտիկ դասերը լինեն ավելի շատ: • Պրակտիկան սկսել երրորդ կուրսում: • Պրակտիկայի ժամկետները երկարացնել:	• Ավելի երկար ժամանակով կազմակերպել մասնագիտական պրակտիկան հեռուստատեսություններում • Ուսանողի հանդեպ լինել սրտացավ: • Սովորեցնել էնտուզիազմ:	• Պրակտիկան սկսել 3–րդ կուրսից 4-րդ կուրսի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով: • Իմ առաջարկները կապված է դպրոցի վերանորոգման հետ: • Երկարացնել պրակտիկայի ժամանակահատվածը: • Ճիշտ կազմակերպել ժամանակահատվածը: • Պրակտիկան դարձնել փոքր-ինչ երկարատև: • Պրակտիկան սկսի տարեսկզբին, այլ ոչ թե մեկ ամիս անց: • Մի փոքր ավել ժամանակ հատկացնել պրակտիկային: • Ուժեղացնել վերահսկողությունը լավ արդյունքների հասնելու համար:

Եզրակացություններ

Ամփոփելով «Լրագրություն», «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» և «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» կրթական ծրագրերով իրականացված մասնագիտական/մանկավարժական պրակտիկայի գնահատման արդյունքները՝ կարելի է փաստել, որ այս տարվա պրակտիկայից գոհունակությունն ընդհանուր առմամբ բարձրացել է: Բարելավվել է նաև պրակտիկայից ակնկալիքների հետ կապված ցուցանիշը՝ նախորդ տարվա 62%-ից դառնալով 77%:

Ըստ հարցվածների մեծամասնության՝ պրակտիկան արդյունավետ է եղել նոր գիտելիքների և կարողությունների ձեռքբերման տեսանկյունից: Գոհունակության համեմատաբար ցածր ցուցանիշ է գրանցվել «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ծրագրի ուսանողների շրջանում:

Ընդունող կազմակերպության, տեղի մասնագետի և բուհի կողմից կցված մեթոդիստի աջակցությունը հարցված ուսանողների հիմնական մասին կողմից «գերազանց կամ «լավ» է գնահատվել: Այստեղ ևս համեմատաբար ցածր գոհունակություն է գրանցվել ապագա կինեզիոլոգների մոտ:

Թեև հարցված ուսանողների որոշ մասը նշել է, որ պրակտիկայի տևողությունը բավարար էր, որոշները մեկնաբանել են, որ այն կարելի է երկարաձգել և տեղափոխել ավելի ցածր կուրսեր արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Հիմնականում 4-րդ կուրսում պրակտիկա անցնելու ցանկություն են հայտնել «ՖԴՍՄ» կրթականծրագրի սովորողները: Հարցվածների մեծամասնությունը կարծում է, որ պրակտիկան պետք է անցնել 2-րդ կամ 3-րդ կուրսում՝ գործնական կարողությունների աստիճանական զարգացման նպատակով:

Պրակտիկանտները հիմնականում լավ կամ գերազանց են գնահատել պրակտիկայի տետրի և անամնեզի քարտի օգտակարությունը՝ երբեմն դժգոհելով տետրը լրացնելու ժամանակատարությունից ու ծավալից:

2023-2024 մասնագիտական/ մանկավարժական պրակտիկայից ուսանողների ակնկալիքները հիմնականում արդարացվել են. «ՖԴՍՄ» ՄԿԾ՝ 84%, «Լրագրություն» ՄԿԾ՝ 80%-ի և “Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» ՄԿԾ՝ 68%: Պրակտիկան բարելավելու համար ուսանողների հիմնական առաջարկը վերաբերել է դրա տևողության երկարաձգմանը:

Առաջարկներ

Հաշվի առնելով ՈԱԲ իրականացրած ուսումնասիրությունները, գործատու ոլորտի կարիքները և ուսանողների պարբերաբար հնչող մտահագությունները՝ առաջարկում ենք նոր մշակվող կրթական ծրագրերում պրակտիկան նախատեսել ավելի ցածր կուրսերում

և հետևողական լինել հաճախումներին: Գործնական կարողությունների զարգացման համար հարկ է հաճախ կազմակերպել արտալսարանային դասեր և պրակտիկումներ՝ ներգրավելով ոլորտի գործող մասնագետների: Պրակտիկայի աճող գոհունակության միտումը պահպանելու համար պրակտիկայի ծրագրի վերանայման գործում ընդգրկել նաև ուսանողների: